ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

08.10. 2016թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2016 թվականի հոկտեմբերի 2-ի Գյումրու ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

2016 թվականի հոկտեմբերի 2-ի Գյումրու ավագանու ընտրություններին մասնակցող բոլոր սուբյեկտները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բացել են նախընտրական հիմնադրամներ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը:

Այն բանկերը, որտեղ բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել են տեղեկանքներ նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

Համադրելով բանկերից ստացված տեղեկանքները սուբյեկտներից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ***փ ա ս տ ում է***, որ.

Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության պետ՝ **Տ.Բաբիկյան**